ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
30 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:
Բացակա էին՝ Արա Գասպարյանը, Էդիկ Իսրաելյանը, Օհան Հարությունյանը, Արսեն Մելոյանը
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքապետի տեղակալներ Վ.Սարգսյանը, Խ. Մկրտչյանը, համայնքապետի օգնականներ Ս.Սարգսյանը, Ա.Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, <<Արմավիրի համայնքապետարանի շախմատի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն Ա. Գալոյանը, <<Արմավիրի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-Ի տնօրեն Ն. Նազարեթյանը, <<Արմավիրի համայնքապետարանի զբոսայգի>> ՀՈԱԿ-ի տնօրեն Դ. Պետրոսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Խուդաթյանը
Նիստը արձանագրում էր քարտուղարության բաժնի պետ՝ Նուշիկ Դավթյանը

Լսեցին
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՋԵԿ. ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝
Արմավիր համայնքի ավագանին որոշում է.
1. Հաստատել Արմավիր համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 30-ի թիվ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
Հողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 103-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՋԵԿ. ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ Արմավիր համայնքի ավագանին որոշում է.
Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի <<Արմավիր համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 103-Ն որոշման

մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն N1, N2, N3 և N4 հավելվածների.
1) Արմավիր համայնքի 2019թ. բյուջեի եկամուտները ավելացնել 1805,2 հազ. դրամով, այդ թվում
ա) Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ 1393 տողին ավելացնել 1805,2հազար դրամ,որից այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման համար 330,0 հազար դրամ, <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների զբաղվածության ապահովում>> ծրագրի շրջանակներում 1475,2հազար դրամ:
2) Արմավիր համայնքի 2019թ. բյուջեի ծախսերը ավելացնել 1805,2 հազար դրամով, այդ թվում՝
ա) 01 բաժնի 6 խմբի 1 դասի <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)>> ծրագրի ծախսերին ավելացնել 400,0 հազար դրամ, այդ թվում <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> 4819 հոդվածին 100,0 հազար դրամ՝ <<Կենաց տուն>> ՀԿ-ին հայկական թաղիքագործության նվիրված ցուցահանդես-փառատոնի անցկացնելու համար աջակցություն, <<Պարտադիր վճարներ>> 4823 հոդվածին 300,0 հազար դրամ՝ ՀՀ ԱԳԿ ծառայությունների վճարման համար:
բ) 05 բաժնի 1 խմբի 1 դասի <<Աղբահանություն>> ծրագրի <<Բարեկարգում>> տնօրինության ծախսերին ավելացնել 394,0 հազար դրամ, այդ թվում <<կապի ծառայություններ>> 4214 հոդվածին 64,0 հազար դրամ, <<Այլ նպաստներ բյուջեից>> 4729 հոդվածին 330,0 հազար դրամ՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման համար:
գ) 08 բաժնի 2 խմբի 4 դասի <<Այլ մշակույթային կազմակերպություններ>> ծրագրի ծախսերի <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> 4239 հոդվածին ավելացնել 416,4 հազար դրամ՝ Անկախության օրվա միջոցառման կազմակերպման համար:
դ) <<Նախադպրոցական դաստիարակություն>> 09 բաժնի 1 խմբի 1 դասի ծրագրի ծախսերի <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> 4511 հոդվածին ավելացնել 1602,7 հազար դրամ՝ այդ թվում.
<< Արմավիր քաղաքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ծախսերի <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> 4511 հոդվածին ավելացնել 133,9 հազար դրամ՝ (4251 հոդված՝ ջրագծի նորոգում):
<< Արմավիր քաղաքի թիվ 5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ծախսերի <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> 4511 հոդվածին ավելացնել 238,9 հազար դրամ՝ (4251 հոդված՝ջրագծի նորոգում):
< Արմավիր քաղաքի թիվ 9 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ծախսերի <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> 4511 հոդվածին ավելացնել 1230,0 հազար դրամ՝ (<<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների զբաղվածության ապահովում>> ծրագրի շրջանակներում աշխատավարձի վճարման համար՝ 4111 հոդված):
11 բաժնի 1 խմբի 2 դասի <<Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ>> ծրագրի ծախսերի <<պահուստային ֆոնդ>> 4891 հոդվածից նվազեցնել 1007,9 հազար դրամ.
Արմավիր համայնքի 2019թ. բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում
աշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ն/

Լսեցին

ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1.Արմավիր համայնքի կողմից գնված և համայնքի սեփականություն հանդիսացող նոր տրանսպորտային լուսացուցային սարքավորումները՝ հավելվածին համապատասխան, անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով տրամադրել <<Արմավիր քաղաքի լուսավորություն>> ՀՈԱԿ-ին երթևեկության կանոնակարգման նպատակով օգտագործելու և շահագործելու համար:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. ՄԵԼԱՆՅԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիր քաղաքի Աբովյան փողոց 141 շենքի, թիվ 48 բնակարանի բնակիչ՝ Նվարդ Վարդանյանի դիմումը վերոնշյալ բնակարանը սեփականության իրավունքով իրեն հանձնելու մասին, Արմավիրի համայնքապետարանի բնակարանային հարցերի ուսումնասիրության հանձնաժողովի 5.08.2019թ. թիվ 1 արձանագրությունը և Արմավիր համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Արմավիր համայնքի սեփականություն համարվող Արմավիր քաղաքի Աբովյան 141 շենքի, թիվ 48 հասցեում գտնվող 62,9 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց սեփականության իրավունքով՝ նվիրատվությամբ օտարել քաղաքացի Նվարդ Վարդանյանին (այսուհետ նվիրառու)՝ ծնված 18.01.1970թ., անձնագիր՝ AR 0262282 տրված 12.04.2017թ. 48-ից:

2.Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ ՀՀ կենսդրությամբ սահմանված կարգով, նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

3.Ընդունել ի գիտություն, որ.

1.Անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում.

2.Պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում է նվիրառուի կողմից:

4.Արմավիր քաղաքի Աբովյան141շենք,48 հասցեում գտնվող բնակարանն (այսուհետ՝ գույք) իր սեփականությունից հանել Արմավիրի համայնքապետարանի հաշվեկշռից:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵԼԱՆՅԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2019թ. հուլիսի 26-ի թիվ 50-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն.

1.1Որոշման նախաբանը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝ «Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի42-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝»:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵԼԱՆՅԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 30.05.2019թ. թիվ 741-Ա որոշումը, Արմավիրի համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի միջև 18.07.2019թ. կնքված պետական գույքի նվիրատվության պայմանագիրը /գրանցամատյանի թիվը՝ 8855/ և ՀՀ Կադաստրիր կոմիտեի կողմից 29.07.2019թ. տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N29072019-04-0047 վկայականը և 21.08.2019թ. N ԱՏ -21082019-04-0270 տեղեկանքը՝.

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ստորև նշված գույքն ընդգրկել Արմավիրի համայնքապետարանի գույքացանկում՝ համապատասխան հաշվառային արժեքներով, այդ թվում՝

ՀՀ Արմավիր քաղաքի Մ. Հերացու 5 hասցեում գտնվող, 1978-ական թվականներին կառուցված շինություններ՝/04-001-0001-0005-001 սանէպիդկայան՝ 1976.4քմ, 04-001-0001-0005-002 սանէպիդկայան՝ 630,6քմ, 04-001-0001-0005-003՝ ավտոտնակ՝ 161.9քմ/ – 150209782 /մեկ հարյուր հիսուն միլիոն երկու հարյուր ինը հազար յոթ հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ.

- ՀՀ Արմավիր քաղաքի Մ. Հերացու 5 հասցեում գտնվող շինության զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ հողամաս 0,96 հա – 2998159 /երկու միլիոն ինը հարյուր իննսունութ հազար մեկ հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՔՍՅԱ ԴՈԼԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայության դիմաց տեղական վճարի հաշվարկման և գանձման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայության դիմաց տեղական վճարի հաշվարկման և գանձման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

Լսեցին

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՔՍՅԱ ԴՈԼԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2019թ. փետրվարի 22-ի N 14-Ն որոշումը, Արմավիր համայնքի ենթակայության թիվ 1, թիվ 3, թիվ 6, թիվ 7, թիվ 9, թիվ 10 մանկապարտեզների տնօրենների՝ 2019 թվականի օգոստոսի 21-ի թիվ 2650, թիվ 2651, թիվ 2652, թիվ 2653, թիվ 2654, թիվ 2655 զեկուցագրերը և արտոնություններ ստանալու նպատակով ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայությունից օգտվողների համար տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի արտոնությունը կիրառել 2019 թվականի սեպտեմբերի 1-ից՝ համաձայն հավելված 1-ի,

Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայությունից օգտվողների համար տեղական վճարի դրույքաչափի 50 % նվազեցում արտոնությունը կիրառել 2019 թվականի սեպտեմբերի 1-ից՝ համաձայն հավելված 2-ի,

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

Լսեցին

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՂԱՎՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 103-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 29-ի թիվ 22 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 23-ի թիվ 2696 արձանագությունը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Արմավիր համայնքի 2019 թվականի բյուջեի <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> բաժնի 7 խմբի 1-ին դասի ծախսերի 4729 հոդվածի միջոցներից օգնություն հատկացնել սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Ավագանու անդամներ

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՅԿ ԴՈԼԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԵՌՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՌԱԴԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՇԻՐՎԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ն.ԴԱՎԹՅԱՆ